ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/19

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.01.2021թ. թիվ 26/26/700-2021 գրությամբ «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 20.01.2021թ. թիվ Ե/40/90-21 գրության հիման վրա 21.01.2021թ. թիվ 26/26/700-2021 գրությամբ նախաձեռնել է «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/19 ընթացակարգի շրջանակներում 03.02.2021թ. ժամը 10:35-ին և 10.02.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.01.2021թ. թիվ Ե/40/90-21 գրությամբ հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից սեփական կարիքների համար «Համակարգիչների, պատճենահանող սարքավորումների և սերվերների» ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով գնման ընթացակարգ, որին, ի թիվս մյուս մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն: Մասնակցության հայտի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից առաջարկվող բազմաֆունկցիոնալ սարքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված մասնակցության հայտի հավելված 1.1-ի նշված տեխնիկական բնութագրում առկա են մի շարք անհամապատասխանություններ հրավերի անբաժանելի մաս կազմող տեխնիկական պահանջներին: Գնահատող հանձնաժողովի 11.01.2021թ. թիվ 2 որոշմամբ նիստը կասեցվել է և Ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շտկված հավելված 1.1-ը: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից կատարվել են շտկումներ, սակայն հանձնաժողովը, դիտարկելով Ընկերության ներկայացված շտկված հավելված 1.1-ը, արձանագրել է, որ Ընկերությունը 1-ին չ/բ-ի համար առաջարկում է այլ տեխնիկական բնութագրով բազմաֆունկցիոնալ սարք:

Գնահատող հանձնաժողովի 13.01.2021թ. թիվ 3 որոշմամբ Ընկերության մասնակցության 1-ին չ/բ-ով հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ ներկայացնում է Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումը հիմնավորող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/19 ընթացակարգի շրջանակներում 03.02.2021թ. ժամը 10:35-ին և 10.02.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/19 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/19 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար «Համակարգիչների, պատճենահանող սարքավորումների և սերվերների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված 1-ին, 5-րդ և 20-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը լրացված են թերի, որից պարզ չէ, թե ինչ տեխնիկական բնութագրով ապրանք է առաջարկված:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 12.01.2021թ. ժամը 16:30-ը, շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

4. «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով 11.01.2021թ.ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 8-րդ կետի (Տվյալներ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու և դրա հիմնավորման մասին) համաձայն՝

Հ/հ	Ձեռք բերվող ապրանքի անվանումը	Հիմնավորում
1	Բազմաֆունկցիոնալ սարք	Չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին

Տվյալ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.01.2021թ. թիվ 26/26/700-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 20.01.2021թ. թիվ Ե/40/90-21 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: **Ընդ**

որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար «Համակարգիչների, պատճենահանող սարքավորումների և սերվերների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված 1-ին, 5-րդ և 20-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը լրացված են թերի, որից պարզ չէ, թե ինչ տեխնիկական բնութագրով ապրանք է առաջարկված:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 12.01.2021թ. ժամը 16:30-ը, շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

«ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով 11.01.2021թ. ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար***: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի

ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: ***Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին***, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարագավորումները հստակ ցույց են տալիս, որ եթե գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ապա հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ պետք է արձանագրվի հայտի մերժման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի որոշումը և մանրամասն նկարագրվեն արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտի մերժման հիմքերը:

Մինչդեռ, ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-138/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, Ընթացակարգի արձանագրությունները, սույն գործի փաստերի հիման վրա արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից առկա չէ Ընկերության հայտը 1-ին

չափաբաժնի մասով անբավարար գնահատման և մերժման վերաբերյալ որոշում, որպիսի պայմաններում հնարավոր չէ փաստել Ընթացակարգին «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցումը, հետևաբար նաև՝ գնման գործընթացին վերջինիս կողմից ստանձնած պարտավորության խախտումը:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.01.2021թ. թիվ 26/26/700-2021 գրությամբ «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**